

Միրզաճան Յովհաննան	1
Ռոստամ Մկրտումեան Պապայեանց	3
Աբրահամ Մատթեան	10
Գասպար Ամիրեանց	5
Միքայէլ Յովակիմեան	1
Յովհաննէս Իվանովեանց	3
Ետիկար Վարդանեանց	15
Խաչատուր Համբար, Խաչատրեանց	10
Սարգսեան Օրբելեանց Ղարաբաղցի	3
Գաբրիէլ Տէր Մարտիրոսեանց	1
Գրիգոր Թ. Ճանաւորեանց	5
Սարգիս Թառումեանց	1
Պօղոս Վասիլեանց	1
Համբարձում Կերլեան	4
Համբարձում Ամարեկեանց	1
Ղազար Բագարեան	2
Ներսէս Մակարեանց	1
Գէորգ Պոպովեանց	2
Յարէթ Բեկլարեանց	1
Յովհաննէս Արեւելեանց	3
Առաքել Պետրոսեան Մայիսասեանց	2
Յ. Եկուրեանց	1
Յակոբ Մատթեան	1
Աբրահամ Աբրահամեանց	1
Անդրէաս Միսկինեանց	3
Լևօն Աւետեանց	1
Յակոբ Թաստեանց	1
Աւետիք Գրիգորեան Հայկազնեան	2
Ղազար Լազրովեանց	1
Յովհաննէս Խուրարեանց	5
Սարգիս Պօղոսեան	1
Սահակ Պօղոսեանց	1
Յովհաննէս Էլիարեանց	5
Աւագ Ղազար - րեկեանց	1
Խաչատուր Յովսէփեանց	2
Գալիթայ Գուսոր Յովհաննեանց	2

(Շարունակել)

ՇԻՒԿԱՅԵ ԳԻՒԼՕՐԵՅԲ.

Վերջին տարիներս երբ սկսաւ փոքր ի շատէ
Աղգային մտաւոր շարժման շրջանը հետզհետէ
ընդարձակիլ, որով և զանազան պարբերական

հրատարակութիւններ ի լոյս աշխարհ գալով մեր
լուսակարօտ ազգայնոց մէջ առողջամիտ գաղա-
փարներ և լուսաւոր մտքեր տարածել, այդ իսկ
ազգագիւտ հրատարակութեանց մէջ ի թիւս
այլ կարեւոր յօդուածոց շատ անգամ կ'տես-
նուին նաև բարոյական և տնտեսական կենաց
վերաբերութեամբ հրատարակուած լուրջ և հա-
սուն դատողութեամբ գրուածքներ՝ որք պտուղ
են կամ ոմանց գրագէտ ազգայնոց հեղինակու-
թեանն, և կամ լուսաւորեալ ազգաց մեծանուն
և բաղմամբաստակ գրչաց աշխատութիւններոց
թարգմանութեան:

Ըստ իս մեր ազգային ներկայ կեանքի պահան-
ջից նկատմամբ որքան էլ որ բաղմամբ լինին,
և ստէպ ստէպ գրուին այդպիսի յօդուածներ,
դարձեալ կարեւոր են. վասն զի մեր Հայազգի
ժողովրդոց խիստ մեծադոյն մասը ժամանակի ան-
յաջող բերմունքէն պատճառուած խորադոյն
քնոյ մէջ զեռ ևս կ'խորդայ. ուրեմն զորան
հարկաւոր է որպիսի և իցէ յարմարաւոր միջո-
ցաւ ձայն տալ ուժգին և անդադար՝ մինչև որ
սթափուի իւր մեռելատիպ քնից, նայի իւր չորս
կողմը, ճանաչէ և հասկանայ իւր ժամանակի ու-
ղին և այնպէս սկսէ գործել և հոգալ իւր կե-
ցութիւնը բարւոքելու վերաբերութեամբ. ահա
սոյն իսկ Ազգային կարեւոր պիտոյից շարժաութիւ
հարկ համարեցայ գրել այս յօդուածը մեր Շիւ-
րակայ դաւառի գիւղօրէից մասամբ, ոչ թէ ման-
րամասն ստորագրելով զորանց Հայազգի ընակ-
չաց կեանքը այլ մի ընդհանուր հայեացք ձգե-
լով զոցա վերայ՝ մեծայոյս լինելով թէ պատուա-
կան Արարատայ մէջ հիւրընկալութիւն գտնելով
այս՝ փոքր ի շատէ կ'ունենայ իւր օգուտը:

Մի քանի տարի է որ (թէ և ոչ անընդհատա-
բար) օգտախոսութեան պատճառաւ երբեմն երկու
և երեք շաբաթով, և երբեմն մի ամսաչափ մի-
ջոցով կ'պատահի ինձ մեր գաւառի*) Խիւսաղ գիւ-

(*) Այդ գիւղը կգտնուի Արագած լեռան արեւմտեան հիւ-
սիսային ստորոտը մի բարձրաւանդակ գրութեան վերայ, որոյ
արեւմտեան հարաւային կողմը երկու ձորակի բերանում ան-
միջապէս գիւղից որչափ անմիջապէս պարսպով և ինչպէս
չքննադատած թագաւնի բաղմած մեծատանն Հառիճոյ կղիւն
ղէպ ի Շիրակայ լոյնատարած դաշտը. սոյն մեծատանի ման-
րամասն և ձիւք ստորագրութիւնը յօդուածիս նպատակն

ղը մնալ ամառնային եղանակներում, ինչպէս և այս տարի. որքան կարելին է՝ ականատես լինելով ծանօթացած եմ՝ այդ գիւղի բնակչաց կենցաղա- վարութեան կերպին. սոյնպէս և ուրիշ գիւղեր ևս պատահած լինելով և փոքր ի շատէ գորանց

գուրս լինելով, հարկաւոր չհամարեցինք այն ծանօթութեանս մէջ ընդարձակօրէն զբեւ այդ մասին. ցանկացողք կարող են կարգաւ Սարգիս Վարդապետի Սանահնեցույ (այժմ Արքեպիս- կոպոս) ու ձեռնադրորդութիւն ի Մեծն Հայաստան և գրքի առաջին հատորի մէջ և Արէշ Վարդապետի (այժմ Արքեպիս- կոպոս) ու Պատմութիւն Վանիցն Հառիճոյ և անուանեալ գրք- քոյկը. իսկ ես արժան կ'ամարեմ այս կարեւոր տեղեկութիւնը տալ թէ, 1850 թուականից սկսեալ Աղեքսանդրապոլցի բարե- պաշտ անձինք եօթն թուով, մի սիրաշաղկապ Բնկերութիւն կազմած են այդ հռչակաւոր Մենաստոսին ժամանակի հնու- թեան երեսին և բարբարոս ձեռքերէն կրած վերքերն այն է անշուքութիւններն և թերութիւններն բառնալու, և մեր ան- մահանուն և աստածասէր նախնեաց դարմանագործ և պան- ծայի յիշատակը վերականգնանելու և յարմարելու գովելի նպատակաւ. զոյն բարենախանձ ընկերութեան, որոյ պիտաւոր դարձակատարն է Բարեկրօն Տէր Յովսէփ Աւագ Քահանայը կոստանեանց, անգուլ և բաղմամբաւ ջանքով և աստուածա- հաճոյ առատամուէր տուրքով և այլ բարեպաշտից նպատակք ոչ միայն Մենաստոսին իւր վաղեմին համարեաց կենսակեդան գործիւններն վերականգնած և պայծառացած է, և հետզհետէ աւելի պաշտանաւալու և իւր չրժապատն կարեւոր շինութեամբք զարդարուելու վրայ է, այլ և քանի տարուց հետէ այդ Մե- նաստայի հիւսիսային կողմը շինուած է ուսումնարան մի հո- յակապ ննջարաններով և այլ շինուածքներով և պարագայիւք։ Շիրակայ գիւղական մանկանց միտաւոր և բարոյական լուսաւո- րութեան համար, որոյ և արկեսաց պատուք են զոյն գաւառի մի քանի գիւղօրէից ծխատեր, կարելոյն չափ բանիմաց և արժանաւոր քահանայքն և այլ եկեղեցական սպասաւորք։ Այս ուսումնարանին արժանաւոր եկեղեցականներ պատրաստելու յարմարութիւններ ունի և կարող է գէթ մեր գաւառի Հա- յազգի գիւղականաց բաւականին օգուտ մատակարարել, թե- ևր ինչպէս պարան է փոյթ ունեւան ժողովրդականք աշա- կերներն ուղարկել այտաւոր, և մինչև ուսմանց աւարտը թողնել չարունակ, որքան կարելին է ճիշդ և անթերի կատա- րելով այս մասամբ իւրեանց վերաբերեալ պարտաւորութիւն- ները, և ոչ վարուէն այնպէս, ինչպէս մինչև ցայժմ Դոյն Ուսումնարանի իսկոյն հարկաւոր լինելը մեր գիւղական ժո- ղովրդաց ճանախելով մեր հոգեւոր բարձրացնել իշխանութիւնը եօթն Վիրաց հրապալի պատկերի արդեանց երեք մասից մինը ըստ խնդրանց բարեհոգ Բնկերութեան վանիցն Հառիճոյ մի քանի տարուց ի վեր յատկացուցել է ինպիստ Աղգաօգուտ և Աստուածահաճոյ գործառնութեանց Բնկերութեան, որոյ կարեւորութիւնն անժխտելի է յօգուտ և ի զարգացումն ու- սումնարանին և ի պայծառութիւն Վանիցն։

Իսկապէս օգր մաքուր է և առողջարար, նմանապէս չորր բարեհամ և օգտաւէտ, այդ պատճառաւ Վեհափառ Կաթողի- կոսն ամենայն Հայոց Տ. Տ. Գեորգ Դ. այս երկու տարի է որ, այն է մէկ 1869 թուին, և մէկ էլ այս տարի գալով Հառիճոյ Վանաց օգափութեան պատճառաւ, ամառը այդ տեղ կանցուցանել։ Որոյ համար առաջին նուագի գալաւեան երկրորդ տարին Վանից Բնկերութիւնը ուսումնարանի սենե- կանկերու վերայ յատկապէս երկու փայլեղանք սենեակի կա- ուցանելու տուած է պատշաճաւոր շինուածոց և պարագայից հետ, ուր կ'մնար այս տարի հորին Վեհափառութիւնը, որ ինքնին ականատես լինելով գովելի ջանից և աշխատութեանց Բնկերութեանն ի փառս Աստուծոյ և յօգուտ ազգի, առ այս և ուրախանալով իւր հոգեւոր արդուց այնտեղեկի բարեգոր- ծութեան քաջաբաժնակ պատուին փայլելու վերայ, ինչպէս լուե- ցինք, բարեհաճել է իւր Հայրապետական Սուրբ Կոնգակաւ յիշեալ բարեպաշտ Բնկերութեան անդին կեանքը և նախան-

բնակչաց կեցութեան և կառավարութեան վերա- բերութեամբ տեղեկութիւն ստանալով՝ վստահօ- րէն կարող եմ՝ ասիլ՝ որ ընդհանրապէս մեր Հիւրակ դաւառի գիւղաբնակ ժողովրդականք զրեան թէ ա- ռանց զգալի զանազանութեան մի և նոյն հայաց- քը ունին իւրեանց շրջապատող բնութեան վե- րայ և մի և նոյն անշարժութիւնը իւրեանց ապ- րուստի եղանակը զիւրացնելու, մտքերը և սրտերը մշակելու, մէկ խօսքով կենսքերը բարդելու մասամբ, իմէ մի քանի գիւղերի մէջ ասածնե- րուս վերաբերութեամբ տարբերութիւն դանուի, այն էլ անհատական է և ոչ հասարակական։ Հիւրա- կայ երկրագործական գործիքները *) և աշխատաւո- րաց մշակութեան եղանակը գրէ թէ՛ նոյնան դարուն ժամանակակից են. գիւղականաց տները առհա- տարակ միմեանց պատկից, անցուղարձ անկու- ճանապարհները նեղ, ծուռնուծուռն և անմաքուր, շատ անգամ տանիքներու վերայով ստիպուած է զնալ անցուղարձ անողը, որովհետեւ ուրիշ յար- մար ճանապարհ չ'իլայ. այս ամենքը կարելի է նե-

մելի աշխատութիւնը օրհնելուց զկնի, պատուիրել Հոգեւոր Կա- ռավարութեան Հայոց Աղեքսանդրապոլս, որ հոգ տանի Հայ- րապետական սուրբ հրամանու պարտաւորացնել քահանայացու դպրաց և քահանայաորդաց Շիրակայ գաւառի գիւղօրէից, որ այսուհետեւ փոյթ ունեւան յաճախել Հառիճոյ Վանից ուսում- նարանը, և ինչպէս պարտն է չարունակ մնալով այնտեղ ու- սանին իւրեանց կոյման վերաբերեալ գիտելիքը, և այնպէս ցանկացողք բարձրանան քահանայական սուրբ աստիճանը ար- ժանաւոր սպասաւոր լինելով Աստուածեան Տաճարաց և հո- ցեւոր հովիւ Հայազգի ժողովրդոց. ուստի մեծ յայն կայ որ այսուհետեւ հորին Սուրբ Օծութեան Հայրական խնամաց ու- սումնասիրական շնորհ հովանի լինելով Մենաստանի Բնկե- րութեան Ազգայաւ գործառնութեանց, աւելի ևս պիտի պայ- ժառացնէ Մենաստանը, և նորս Ուսումնարանը այնպիսի ար- ժանաւէտ վիճակի հասցնէ, որ ազգի և եկեղեցեց պիտանի անդամներ ծնանելով նորս սուրբ արգանդէն պարծանք դաւ- նան մեր բաղդապուրկ հայրենեաց և պարծանք յաւերժաց- նեն ինչպէս նորին Աստուածընտիրն Վեհափառութեան, նոյնպէս և բարեխան Բնկերութեան անմուսնայի յիշատակները։

(*) Ըստ 15—20 տարի կայ որ Օսմանցոյի առուած գերանդուի փոխանակ իրուաց գերանդուի գործածութիւնը միայն մնած է ժողովրդի մէջ, որի համար կասեմ թէ աւելի յարմար և յա- ռողակ է քաղի համար. վերջին տարիներս էլ մի քանի գիւղ նոր ի նորոյ սկսել են (թէ և նուազ թուով) ֆուրքուն ասա- ցեալ սայլը գործածել ձիաներ լծելով, որովք տարբայ ա- մեն եղանակներում կարողանալով բանացնել, բաւական օգուտ կտանան բանացնողները. այս օգտաւէտ սովորութիւնը մտցը- նողները մեր գաւառի մէջ լուծանքուս նայելով նախապէս Դուռքանդ գիւղի բնակիչ բաւականապէս կարգաւ գրել իմա- ցող մի երկու երիտասարդներ եղած են, որ յայտնի ապացոյց է թէ ժողովրդի մէջ նոր և օգտաւէտ սովորութիւն մտցնելու հետամուտներ աւելի կարգացողներից կ'լինին, հակառակ այն ուսմական առածին (թէ աշխարհ կարգցողի ձեռքէն պիտի անցնի)։

րելի համարել առաջուց շինուած. գիւղերուն. ցաւային այն է՝ նոր գեղեր շինողներն էլ իւրեանց պատիրու օրինակին կ'հետեւին. ինչ որ հնուց տեսած են՝ ինչքան էլ որ վատ և անյարմար լինին այն տեսածները, դարձեալ նոյնը կ'անեն առանց նոր տեսածներու վերայ ուշադրութիւն դարձնելու. ասածիս ապացոյց այս է՝ որ բաւական տարիներուց ի վեր թէ Տիփլիս՝ թէ Ախալցխայ և թէ այլ տեղեր գնալ զարով շատերը տեսած են՝ այդ տեղերու ճանապարհի վերայ դտնուած Գօխօպուռ և Մալական կոչուած Ռուսաղլի ժողովրդոց գիւղերը, որոնք պատշաճաւոր կարգաւ շինուած են թէ տներու գասաւորութեան և թէ միօրոցներու ընդարձակութեան մասամբ. եթէ դորանցից օրինակ վերցնէին Շիրակայ նորաշէն գիւղերու բնակիչք, ինչքան լաւ էր իւրեանց համար. բայց մեր ժողովուրդը խելացի օրինակներ վերցնելու պատրաստ չէ. դեռ պէտք է նորան պատրաստել: Շիրակայ գիւղականք մի քանի տեսակ արմանեղէն այն է ցորեան, զարի, կտաւհատ, տեղ տեղ էլ ոսպ և աճար այն էլ շատ սակաւ. քանակութեամբ ցանելուց ի դատ՝ ուրիշ իւրեանց բնտանեկան կեանքին հարկաւորելի բոյսեր մշակելու հոգ չունին. քիչ տեղեր նոր ի նորոյ սոմորութիւն է ընկած կարթոֆիլ ցանել, որից բաւական օգուտ ևս կ'վաստակին. բանջարանոցներ (բօստան) թէ և բաւական գիւղեր կան, բայց նուազ թուով, որոնցից ոմանց տերերն էլ խիստ դժգոհ են, նորա համար որ դրացիներուց ոմանք բարդապէս զարգացած չ'լինելու պատճառաւ փոխանակ օրինակ առնելու և ցանկալու որ բարգաւաճին այնպիսիքը կարեւոր բոյսերով, որպէս զի իրանք ևս օգտուին դիւրին գնով ձեռք բերելով իրենց կանաչեղէնի պէտքերը, ընդհակառակը դեռ բոյսերը չ'զարգացած կ'սկսին դողմալով, և այլ կերպ վնասներ տալով փչացնել բանջարանոցները մեծ մասամբ, և այսպէս վշտացնել նոցա տերերը ի զուր հանելով նրանց աշխատութիւնը, և ծախս արած փողկըր: Շիրակացիք բանջարեղէնի պէտքերը կ'հոգան ըստ մեծի մասին կամ Եղեքսանդրապօլ քաղաքից գնելով մանաւանդ կաղամբն (լախանայ) և սոխ և կամ այս վերջինը Զարի ասացեալ մանրալմաճառներից

բաւական թանկ գնով. սոյնպէս ծառներ տնկելու անգամ սովորութիւն չ'կայ Շիրակացուց մէջ, որ եթէ լինէր՝ բաւական օգուտ կարող էին տանել, մանաւանդ այն գիւղերը՝ որոց տեղերու յարմարութիւնը կ'ներէր բաւական ընդարձակ ծառատունկներ ունենալու, ինչպէս Խիչաղ գիւղը, որոյ արեւելեան հարաւային և արեւմտեան կողմերը ձորակներ կան՝ որոց միջով անցնում են առուններ, ինչքան յարմար է և օգտաւէտ կ'լինի գիւղականաց եթէ դործից ազատ միջոցներում աշխատին կամ անձնական և կամ որ աւելի լաւ է հասարակական ծառատունկներ պատրաստելու. այսպիսի յարմարութիւններ ուրիշ շատ գիւղեր ևս ունին, միայն թէ դործի օգտաւէտութեան վերայ ուշադրութիւն դարձնողներ և աշխատողներ*) հաղուեալիւս են: Գաւառիս մէջ մէկ գիւղից միւս գիւղը կամ այլ տեղեր երթալու ճանապարհները շատ անբարեկարգ են, քարքարուտ և դարււփոս, ուստի և վտանգաւոր, որից շատ անգամ պատահած են վնասներ թէ լծկան անասնոց և թէ սայլորդաց մինչև անգամ մահացուցիչ զէպքեր ևս յառաջ եկած են այս անհոգութեան երեսից. ուրեմն որքան հարկաւոր և անհրաժեշտ, որ գիւղականք դարնան բացուելուն պէս կամ այլ յարմարաւոր միջոցներում՝ երբ ուրիշ խիստ կարեւոր գործեր չեն ունենար, խրաքանչիւր գիւղից կարելի թուով մշակներ հասնն ամեն մէկ տարի և պատշաճաւոր կերպով բարեկարգեն ճանապարհները: այս բարեկարգութիւնը անել տալու պարտքը գլխաւորապէս ամեն մէկ գիւղի տանուտերաց և այլ յտաշաւոր անձանց վերայ կ'ծանրանայ. վասն զի ժողովուրդը առանց Առանջնորդներու ինքնին դործելու անկախ է:

(*) Թէ և Խիչաղոյ բարեկրօն տէր Մինաս քահանայն, որ բաց ի քահանայական հովուութենէն, երկարաժամանակեայ իրերեցի չափ արդիւնաւոր ուսուցչութեամբ ևս երախտաւոր է թէ իւր և թէ օտար գիւղականաց ոմանց վերայ, երկու տարի առաջ գիւղի Արեւմտեան ձորակի մէջ ինչպէս իւր օգտի նոյնպէս և ուրիշներին բարի օրինակ տալու համար վաթսմաս չափ ուռի ծառեր տնկած է եղել, բայց բարեխիղճ դրացիներէց ոմանք անյայտ պատճառով փոքր ինչ միջոցից յետոյ բոլորովին փչացրել են, ինչպէս և այս տարի յիշեալ քահանայի փոքրիկ բանջարանոցում ցանուած կարթօֆիլը. թէ զոգտնալով և թէ այլ կերպ վնասելով գրէ թէ խաղառ ոչնչացրել էին. ու եթէ ընդ փայտ դարձր զայս տունեն, ընդ չորն պիտի լինէր:

Այս ամեն հոգացողութիւններից աւելի հարկաւոր է մեր Շիրակացոց համար ցորենի և գարու հասարակական ամպարներ*) ունենալ ամեն մէկ գեղերու մէջ՝ ինչպէս և բարեխնամ Տէրութիւնն էլ լաւձներուս նայելով քանի մի անգամ այս մասին ի թիւս այլ հպատակաց տրանց ևս թէ շրաւոր և թէ բանաւոր եղանակաւ պատուէրներ տուած է. կկրկնեմ խօսքս, մեր գաւառացոց համար այսպիսի ամպարներ ունենալը խիստ շատ հարկաւոր է. վասն զի գաւառիս մէջ սովորաբար երկու կամ երեք և կամ առ առաւելն չորս տարի իրար մերայ հացը բաւական առատ կլինի. մի միջանկեալ տարի ևս զանազան վնասառիթ գէպքերով առաւելապէս երաշտութեան պատճառով հացը սուղ զայով՝ համարեալ՝ ժողովրդեան պէտքը լրացնելու չի բաւականանար. ուստի և կսկսի ժողովուրդը մանաւանդ աղքատ մասը սովից կոտորուելու չափ երկիւղի մէջ ընկնելով տատանել և տաքնապել. և մեծ տառապակրութեամբ իւր օրական պարէնը հաղիւ հաղ ձոր ու ձուր անել. իսկ ցանելու համար թէ քաղաքացի և թէ գիւղացի ունեւորներից հաղար աղաչանքով սերմացու առնել, և իւր պարարտ արտերու մէջ կիսովի ցանել, որով և առատ ժամանակներու միջոցին ևս կիսով չափ միայն օգտուել, այն ինչ առատ տարիներում առանց աջ ու ձախ նայելու, առանց հարկաւորը անհարկաւորէն դանազանելու և առաջին պիտոյքը երկրորդականէն որոշելու, էժան էժան դնով համարեալ բոլորովին զուր և անօգուտ տեղը վատնած է իւր կենաց զլիաւոր հարկաւորեկաց նշանաւոր մասը, որ և թէ իւրաքանչիւր առատ տարիներում սուղ տարիներու

համար կարելոյն չափ մաս և բաժին հանէր, և հասարակական ամպարներու մէջ ժողոված ունենար, հարկաւ այս ներդրութիւններից ազատ պէտք է մնար.

(ԼՆՈՐԵՆԷ Է ԳԵԼԻԵՒԷԷՐ)

ԲԻԼԶԱՆԴԵԱՆ ՍՈՒՐԶԱՆԳԱԿ

Գեր. Արիստակէս Արքեպիսկոպոս. — Հաշտութիւն. — Գեր. Բարդուղիմէոս Եպիսկոպոս. — Պօղոս վարդապետ, և Գեր. Գեորգ Արքեպիսկոպոս. — Գեր. Երեմիա Եպիսկոպոսի պաշտօն. — Երեմի. ընդ. ժողով. — Եղիստոսի տնցըր. — Եղեսիայէն. — Զմիւռնիա. — Կոնդակ. — Կրօնի զղացմունքներ. — Հայկաբան քաթոլիկ վարդապետ:

Վերջապէս ներկայ Ազգ. Վարչութիւն տեղւոյս տնօրինեց և սկսաւ տալ Գեր. Արիստակէս Ս. Արքեպիսկոպոսին ամսական ԷճԼՆ հարէւր դահիւկան, որ ցաւապար անձամբ շատ տառապանաց ենթարկուած է և Պատր. Տեղապահութեան ժամանակ զրկուելով. . . . ցարդ Իւսկիւտարու թաղ. անտուկը անկարող էր յարմար և զոհացուցիչ սնունդ տալ նորին Գերապատուութեան:

Գոհութեամբ կհաղորդեմ Ազապ. Վարժարանի տնօրինով Մանուէլ Խմբագրապետ Պ. Վ. Փանոսեանի և Օրհմէլ Խմբագրապետ Պ. Օ. Խոճաւարեանի մէջ շարունակեալ անպատեհ և վնասակար կռուին վերջանալը, որ վիճանձն Օսմանցի պաշտօնակալք գեղեցիկ օրինակ տուին մեր Պատրիարքարանին՝ երկուքը հաշտեցնելով:

Թէ և ցաւ է Սամաթիոյ բնակչաց սակաւթիւն անձանց հակառակելով նոյն խնդիրը նորոգել ջանալը և իւր թէ Թաղ. Խորհրդոյ պատիւ պահանջելը, բայց յոյս ունիմ որ նա ալ վերջանայ քաղցրութեամբ և շուտով:

Գեր. Բարթոլղիմէոս Եպիսկոպոս՝ ըստ թաւանձանաց և խնդրագրութեանց Պրուսայու լաղմամբիւ ժողովրդեան և տեղւոյն Երիւսի. ժողովոյ՝ անցեալ օրեր (Հոկտեմ. 20) վերադարձաւ ի Պրուսա:

Յաւայի է Պատրիարքարանի առաջին և այժմեան Վարչութեան ընթացքը, առաջինը բաղում

(*) Երբեք ամառը մի քանի տարուց հետէ հիմնուած է Բամբակոյ—ձորոյ գաւառի Համաթի գիւղի մէջ նոյն դիւղի բնակիչ բարեկրօն տէր Աւագ քահանայի գովելի աշխատութեամբ. նոյնպէս այս վերջին տարիներս յիշեալ գաւառի Առդիբէկ գիւղի մէջ այդ գիւղի ձիառէր բարեկրօն տէր Յովհաննէս քահանայի քանքով: Մոյն ամպարները, որոց առաջինը ինչպէս կրնե՞ք բաւական արդիւնաւոր վիճակի մէջ է, թէպէտ հասարակական չեն, այլ մի քանի անձանց ընկերակցութեամբ հիմնուած, սակայն զարմեալ ի դեպս հարկաւորութեան կարող են օգուտ բերել իւրաքանչիւր իւր տեղի հասարակութեան, և բարի ու նախանձելի օրինակ դառնալ այլոց: Երանի թէ այսպիսի հասարակաց օգուտը մտածող և իւրեանց օրինակով նորանց ցոյց տուող հոգեւոր հովիւներու թիւը աւելանար, որպէս զի ժողովուրդը հնազանդ գէպի բարեկեցութիւնը զեմելու ամաճորդուէր: